

Nouneh Sarkissian has generously offered this charming fable for our newsletter's new section for children and youth. An English summary by Gagik Stepan-Sarkissian follows.



ՀԵՐՈՍՆԵՐ

Չեղինակ եվ նկարիչ՝ **Նունե Սարգսյան**

Երկու մրջյուն,
Երկու ընկեր աշխատասեր ու լուռուճուճ,
Երբ հոգնեցին իրենց կյանքից,
Որոշեցին մեծ սյուն
սարքել:



«Երբ որ
սյունով
հասնենք
արեգակին,-
ասացին,-
մենք
կդառնանք
աշխարհի
հերոսները
թանկագին»:

Երկու մրջյուն,
Երկու ընկեր
աշխատասեր ու լուռուճուճ,
Որոշեցին ցախ հավաքել,
Չամբերությամբ մի սյուն շարել:
«Մի՞թե ցախե սյունով բարակ
Դուք կհասնեք արեգակին»,
Չարցը տվեց ագարակից շունն
ահագին:

Երկու մրջյուն,
Երկու ընկեր աշխատասեր ու լուռուճուճ,
Բան չասացին:
Սակայն մեր այս շունն ահագին,
շուտ միացավ մրջյուններին:
Ուզեց հասնի արեգակին,
որ շուտ դառնա հերոս կարգին:

Երկու մրջյուն,
Երկու ընկեր
աշխատասեր ու լուռուճուճ,
Եվ մեր ծանոթ շունն ահագին,
Դեսից-դենից՝ ագարակից,
Մարգագետնից ու անտառից,
Այնքան շատ ցախ հավաքեցին,
Որ մեծ բացատը ծածկեցին:

«Այս ցախերը, ի՞նչ է, պիտի շարե՞ք,
որ մագլցե՞ք, եվ շուտ հասնեք արեգակի՞ն,
հերոս դառնաք մեծ ու կարգի՞ն,
եվ այդ բոլորն առանց ի՞նձ»:
Չարցը տվեց հաստափորիկ, հաստակաշի
եվ հաստավիզ ռնգեղջյուրը,
շատ զարմացած, որ իրեն մոռացած,
գնում են դեպի արեվը երկու մրջյուն եվ մի
շուն:

Ահա սյունը՝ արդեն պատրաստ,
Սարքած ցախից՝ բարձրանում է մինչեվ
երկինք:

Անչափ բարձր է: Եվ ճոճվում է
Այսուայն կողմ՝ ծանրությունից:
Մեկ՝ աջ, մեկ՝ ձախ,
Դեպի առաջ,
Եվ դեպի հետ:



«Սա ի՞նչ
բան է,-
ասաց
փիղը,- ինձ
թողնու՞մ եք



ու գնու՞մ եք
ցախե սյունով
դեպի վերե՞վ:
Ինչո՞ւ պետք է
այստեղ մնամ
եվ ձանձրանամ:
Հիմա ճամպրուկս
բերեմ,
Բոլորի հետ վերեվ
ելնեմ:



երկու ընկեր աշխատասեր եվ լուռուճուճ,
մագլցում են, մտածում են.

«Մի քիչ հետո, երբ որ
հասնենք արեգակին
եվ հերոսներ դառնանք
կարգին,

Ի՞նչ կլինի մեր
ապագան»:

Ագարակի
շունն
ահագին
մագլցում է,
Մտածում է.

«Մի քիչ հետո ես

Երկու մրջյուն,
երկու ընկեր
աշխատասեր բան չասացին:
Պարաշյուտներ վերցրեցին,
ու լուռուճուճ մագլցեցին
ցախե սյունը:
Ագարակի շունը կարգին,
դեպի սյունը արագ վազեց,
մրջյուններին շտապ հետեվեց:

«Վա՛յ, առանց ի՞նձ,
Անհնա՛ր է:
Ռնգեղջյուրը հաստակաշի,
խուճապի մեջ շտապ-շտապ վազեց,
ճիշտ ցախն ի վեր նա մագլցեց:

«Բա ե՞ս, բա ե՞ս,-
ասաց Փիղը,
-չի՛ կարելի, որ առանց ինձ
դուք բարձրանաք դեպի արեվ»:
Եվ նա նույնպես՝
իր ճամպրուկով
քայլեց վերեվ:

Երկու մրջյուն,
Երկու ընկեր աշխատասեր ու լուռուճուճ,
Ագարակի շունը կարգին,
Ռնգեղջյուրը հաստակաշի,
Եվ մեծ փիղը իր ճամպրուկով,
Անվախ ելան սյունով վերեվ:

Երկու մրջյուն,

կհասնեն Արեգակին
եվ կդառնան հերոս կարգին,
բոլորն ինձ շատ կհարգեն,
Շքանշան կնվիրեն»:

Ռնգեղջյուրը հաստափոր
Փնփնթում է միայն դժգոհ.

«Սրանց տեսեք,
Առանց ինձ,
Հերոս դառնալ են ուզում:
Դա չի լինի առանց ինձ,
Ոչ մի դեպքում՝ առանց ինձ:
Չէ՞ որ ես շատ կարեվոր եմ,
Չէ՞ որ ես շատ իմաստուն եմ»:

Փիղը՝ բռնած իր ճամպրուկը,
Մագլցում է սյունն ի վեր:
«Լավ է տեսա, լավ է հասա,
Առանց ինձ դուք ի՞նչ կանեք,
Ես եմ արքան գազանների,
Ես եմ առաջնորդը մեծ»:

Երկար սյունը՝
Ցախից սարքած,
Ծանրությունից
Ծռվեց քիչ-քիչ դեպի ցած:
Սյունը ճռռաց ու ճռճռաց,
Թեքվեց նախ ձախ, եվ հետո՝ աջ,
Եվ կոտրվեց

Եվ տապալվեց
Ու մասերի բաժանվեց:

Մրջյունները՝ պարաշյուտով,
Շունը՝ կարգին վայնասունով,
Ռնգեղջյուրը՝ դրնբոցով,
Իսկ մեծ փիղը՝ իր ճամպուրով,
Աղաղակով ու աղմուկով,
գետնին ընկան մեծ ցնցումով:

Երկու մրջյուն,
Երկու ընկեր աշխատասեր ու լուռումունջ,
Բան չասացին:
Սուս գնացին իրենց գործին:

Շունը՝ ոռնաց ահագին.
«Ախր հերոս չեղա կարգին»:
Ռնգեղջյուրը բարկացած,
Փորուփոշման անտառ գնաց:
Իսկ մեծ փիղը ոտքը կոտրեց,
Ու մտածեց.
«Ինչի՞ս էր պետք հերոս լինել,
Առանց դրա արդեն լավ էր»:

Անցավ աշուն, անցավ ձմեռ,
Անցավ գարուն, եկավ
ամառ:

Մրջյունները
մտածեցին,
«Մենք չենք ուզում
նորից հասնել
արեգակին եվ
հերոսներ դառնալ
կարգին:
Մենք ուզում ենք լավ
աշխատել,
ուրախ լինել:»

Շունը ոռնաց ամբողջ
աշուն, ամբողջ
ձմեռ,
ամբողջ
գարուն,
մինչեվ
դարձավ

Ռռնոցի մեջ ամենալավ ողջ անտառում,
ագարակում եվ աշխարհում:


Ռնգեղջյուրը հաստակաշի,
պատմում էր ամբողջ տարին,
Թե ինչպես վեր նա ճամփորդեց
Եվ Արեվին «հանդիպեց»:

Փիղը գնեց մի նոր ճամպուրով,
ճամփա ընկավ դեպի Կոնգո:
«Չերոս չեղա, ամուսնանամ գոնե հիմա»:

Երկու մրջյուն
Երկու ընկեր աշխատասեր
եվ լուռումունջ,
Վերադարձան իրենց գործին ,
Աշխատեցին անընդմեջ:
Կառուցեցին մի մեծ կամուրջ
եվ կոչեցին Մրջնականուրջ:

Մրջյունները հավաքվեցին
«Մեծ հերոսներ» բղավեցին:
Երկու ընկեր,
Երկու մրջյուն
աշխատասեր ու լուռումունջ
խոնարհվեցին ու ժպտացին,

իրենց գործին հետ
գնացին:



Ամեն գործի մեջ
մինչ հիմա
Եվ այդպես էլ
միշտ կմնա,
Մեկն կաշխատի,
մյուսը կխոսի,
Մյուսներն էլ ուղղակի,
Ոչինչ չարած,
Անուն շինած,
Կրկավեն, կաղաղակեն,
Որ իրենք են
հերոսները
աշխարհի: ■

Heroes

Nouneh Sarkissian

Story & illustration

Two hard-working ants decided to build a column to reach the Sun and thus become heroes.

They started gathering firewood and soon enlisted the help of the farm dog who also had developed an ambition to reach the Sun and become a hero in his turn.

Surprised and somewhat put off at being left out, the rhinoceros joined the effort and soon the column reached the sky, swaying left and right, back and front, under its increasing weight.

"What is this, are you leaving me behind? Why



should I remain here and get bored? I shall now get my suitcase ready and join you in your climb," said the elephant.

The two ants did not object. They donned their parachutes and quietly began their climb. The farm dog, the rhinoceros and the elephant followed.

While climbing, the ants were wondering what their future would be like, once they reach the Sun and become heroes.

The dog was dreaming of reaching the Sun, becom-

ing a hero and receiving a medal for his achievement.

The rhinoceros was muttering to himself, "Look at them. They want to become heroes without me. That is out of the question; am I not the most important and most wise?"

Climbing the column, the elephant was thinking, "I am glad I saw what was afoot and caught up with them. What would have they done without me? I am the king of the beasts and their great leader."

Under the climbing weight, the long column leaned to the right, leaned to the left and eventually broke into pieces and collapsed. The ants landed with their parachutes, the dog with a lot of wailing, the rhinoceros with a huge thud and the elephant with his big case.

They all went about their business, as if nothing had happened.

A year passed. The ants thought, "We no longer want to reach the Sun and become heroes. We want to work and be happy."

The dog howled all the year round, until he became the finest howler in the entire world.

The thick-skinned rhinoceros was telling all and sundry how he travelled high and 'met' the Sun.

The elephant bought a new suitcase and set out for Africa, saying, "I failed to become a hero, so perhaps I should get married now."

The two industrious ants worked incessantly and built a big bridge. They were now hailed by their fellow ants as true heroes.

It has always been the case and so it remains now that in every walk of life, some people work, some talk and others proclaim to the whole world that they are the real heroes on this planet. ■ 2006

